շրջաբերան մումիա ¹ ըսուած կակղամիս կենդանին և տեսակ տեսակ ժրժմունքներ ։ Աս ամէն տեսակ կենդանիներէն յայտնի կը տեսնուի որ երրորդ կազմութիւնը անոյշ ջրերէ ձևացած է ։

Չորրորդ կազմութիւնը կրային է, և ծովու ջրերէ առաջ եկած ․ ասոր մէջ կը գտնուին զանազան ծովային ժժմունքներ և կենդանեաց մնացորդներ ։ Աս կազմութեան մէջ գտնուած գործածական հանքերն են քուարց ու կիրի ածխուտ բիւրեղացած, և շինուածքի համար կրային քարեր ։

Հինգերորդ կազմութիւնը բոլորովին կաւային է և աւազախառն, ու կը գործածուի հողէ ամաններ շինելու ։ Աս կազմութեան մէջ շատ կենդանեաց ու բուսոց մարմիններ կը գտնուին ․ փայտերէն շատը ածուխի կերպարանք առած են, շատն ալ իրենց գոյացութենէն քիչ փոխուած ․ իսկ ժժմունքներուն յատկութիւններէն կ՚իմացուի որ աս կազմութիւնն ալ անոյշ ջրերէ ձևացած է ։

Աս համառօտ տեղեկութեամբ իմացուեցաւ երրորդական հողերուն կազմութիւնը, և իրենց մասնաւոր յատկութիւնները ․ հիմա նայինք թէ ինչ պիտուական ու տնտեսութեան մէջ գործածելու նիւթեր կ՚ելլեն անոնցմէ ։

Ասոր գիտնալու բանն աս է որ երրորդական կարգի բաղկացուցիչ հողերը կրային ու կաւային ըլլալով՝ իրենց մէջէն ծանրագին հանքեր չեն ելլեր ․ բայց ելած կրաքարերն ալ իրենց ճերմակութեան՝ մաքրութեան ու ազնուութեանը համեմատ արժէք ունին ․ ինչպէս են զանազան տեսակ մարմարիոնները՝ որ շինուածքներու և ճարտարապետական զարդերու կը գործածուին ։ Պայլախազի հետ բաղդրած կրաքար, որ աղօրիքներու կը գործածուի ․ կոպիճ՝ փողոցները յատակելու շտկելու համար ․ քուարցախառն աւազ, որ ապակագործութեան արհեստին գլխաւոր նիւթն է ․ տեսակ տեսակ կաւեր՝ որով կը շինուին հողէ պտուկներ ու ազնիւ ամաններ ․ ակատ, ոփաղ, որ զարդարանքի կը գործածուին ․ ծովային փրփուր ¹ որ տեսակ մը մանեզեան քար է փղոսկրի պէս ճերմակ, ու տնական բաներու կը գործածուի ․ կը գտնուի նաև սաթ, ծծումբ և ձիւթ ։

1 Լատ․ Cyclostoma mumia.

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թաթառ ։

Բնութեան մէջի ահաւոր երևոյթներէն մէկն ալ թաթառն է ․ Թաթառ ² կ՚ըսուի ան թանձր գոլորշիքներէ ձևացած սիւնը, որ երբեմն գլանաձև կ՚ըլլայ, երբեմն կոնոնաձև, և երկրիս կամ ծովուն երեսէն ինչուան ամպերը կը բարձրանայ ․ երբեմն անշարժ կը կենայ, երբեմն ալ սոսկալի պտոյտներով տեղէ տեղ կը փոխուի, դիմացը ինչ որ գայ՝ կ՚առնէ վեր կը հանէ, ու յետոյ բարձրէն վար ձգելով ջարդուբուրդ կ՚ընէ ։ Սանկով ծովուն մէջ շատ վնասներ կ՚ընէ ու մեծամեծ նաւեր ալ կը կոտրտէ ․ իսկ երկրիս վրայ որ իջնայ՝ խորարմատ ծառերը կը խլէ, մեծամեծ շէնքերը կը փլցընէ, և արտերն ու այգիները կ՚աւրըշտըկէ ։ Թէպէտ երբեմն ալ թաթառները խիստ մեծ վնասներ չեն ըներ ․ երբեմն ծառերուն գագաթը կ՚իջնան, որով տերևները՝ ճիւղերը իրար կ՚անցընեն, երբեմն ծխնելոյզներէն ելած ծուխերուն վրայ, երբեմն ալ փողոցներու մէջ իջնալով՝ անոնց փոշին կլորցընելով վեր կը վերցընեն ու ետքը կը ցրուեն ։

Բնագէտներէն ոմանք ըսին թէ թաթառին պատճառը ներհական հովերն են, որ մէկմէկու դէմ հան-

1 Գղ․ Écume de mer.
2 Խօրթում ։ Գղ․ Trombe.



Թաթառ :

գիպելով իրարու կը պլլուին ու վեր կ'ելլեն կամ վար կ'իջնան . բայց շատը , և մանաւանդ նորերը , ելեքտրականութիւնը պատճառ կը դնեն Թաթառին , ըսելով Թէ ելեքտրականութիւնը օդին մէջէն երկրիս հետ կամ երկրէս օդուն հետ հաղորդուելու ատեն՝ վերի գոլորշիքները կը ժողվէ՝ վար կ'իջեցընէ , կամ գետնին երեսի բաները վեր կը հանէ :

Պատմութեց մէջ շատ կը յիշուին Թաթառին վնասները . բայց ուրիշ ամէն տեղէ աւելի հասարակածին տակ եղած ծովերուն մէջ կը պատահի սարսափելի կերպերով : Ափրիկէին արևմտեան ծովեզերքը աւելի ստէպ ու աւելի մեծ կ'ըլլան Թաթառները , բայց ասոնք գրեԹէ միշտ նոյն ձևով տեսնուած են : Երբոր Թաթառ իջնալու ատենը մօտ է , ծովուն մէկ կտորը որ քիչ մը առաջ հանդարտ կեցեր էր՝ յանկարծ կը սկսի խռովիլ . մխալ ու եռալ յորձանքի պէս պտըտքելով ու գոռալով : Մէյմըն ալ կը նայիս որ ամպերը կը ցածնան , ու ան խռոված տեղւոյն անանկ կը մօտենան որ կարծես Թէ ծայր ծայրի պիտի դպչին . ասոնց մէջտեղէն կ'երկըննայ բուրգի ձևով սիւնակ մը . երբեմն աս սիւնակը շուտ մը կը միանայ ջրին հետ , երբեմն ալ ինչուան որ միանան՝ խել մը ատեն կ'անցնի : Ջուրը քանի կ'երԹայ կը խռովի . սիւնակը երԹալով կը լայննայ , ամպերն ալ աւելի կը ցածնան . վերջապէս բոլորը մէկէն կը միանան , և հազարաւոր ոտնաչափ բարձրութեամբ ջրէ սիւն մը կը ձևանայ , որուն խարիսխը կամ վարի ծայրը ծովուն վրայ կ'երևնայ , իսկ գլուխը ամպերուն մէջ մնալով աչքի չերևնար : Երբեմն աս սիւնը քանի մը վայրկեան անշարժ

կենալէն ետքը կը ցրուի. բայց երբեմն ալ կը սկսի ուղիղ ընթացքով մը քալել, և ինչ նաւեր որ դիմացը ելլեն՝ կը կլլէ։ Այս երևոյթը տեսնուած ատենը փոփոխական հովեր կ'ելլեն, յանկարծ յանկարծ օդը կը խաղաղի ու կը խռովի, և սովորաբար մագնիսական ելեքտրականութիւն նշաններ ալ յայտնի կ'երևնան կողմնացոյցի վրան։ Մաթառը ցրուելու համար՝ նաւավարները նաւերէն թնդանօթներ կ'արձրկեն. վասն զի անով օդուն մէջ սաստիկ ցնցում կը պատճառի, և յորձանքներուն ընթացքը խոտորելով՝ թաթառն ալ կը քակուի կը ցրուի։

Մաթառին սոսկալի երևոյթը կենդանի նկարագրութեամբ կը պատմէ Յաննրքէն[1] անունով մեր ատենի երևելի գաղղիացիներէն մէկը, որ հոս կը դնենք՝ նաև իբրև ընտիր մատենագրութեան օրինակ։

Ես ինչ կարի բացական էաք 'ի կղզւոյ սրբոյն Դոմինիկոսի քան զփարսախս հարիւր, և չև ևս դէպք ինչ նշանաւորք պատահեալ էին մեզ յորմէ հետէ մեկնեցաքն յափանց Գաղղիոյ։ Հողմն առաւօտին որ այգուն այգուն հանգարտագոյնս ընչեալ հարկ առնէր մեզ պարզել զառագաստն զամենայն, սակաւ թուէր ցրտանալ. և ահա գոգցես յեղակարծուց իմն յարեաւ հողմն յաջողակ, և գամ քան զգամ սաստկացեալ վարէր տանէր զնաւն մեր ընդ կոյս կոհակաց անհնարին երագութեամբ։

Սակայն պայծառ և գեղեցիկ էր օդն և կապուտակ երկին. յարևմտից կուսէ յիջանել անդ արեգական մեծաւ փառօք 'ի ծով, եղերք երկնից բոցավառեալ՝ զլայնածաւալ հրդեհմանց բերէին զկերպարան. լուսափայլ երեսք ծովուն յանդիման առնէր տեսանելեաց զանեզրական իմն զլիճ մետաղաց 'ի բովս հալելոց. և թէ յանկարծ ուրեք դէպ տայր հաւու թռչկանի գալ անցանել ընդ այն կողմն երկնից, աչք մեր կորովաբիբ հետավարեալ նշմարէին զնա հանգոյն իմն արշնաթոյր շամանդաղից, որ 'ի թղթոց բորբոքելոց ցնդեալ՝ թեթևս թռուցեալ վերանան քան զբոց... Դէպ ուղիղ յարեգակն կոյս նաւարկեալ խաղայաք մեք. և թէ ոք 'ի բացէ 'ի զնին մերոյ ուղևորութեանս կայր 'ի ժամուն, համարէր անշուշտ եթէ աճիւնանալ 'ի հրաբորբոքն յայն վառարան դիմեալ երթամք, իբրև զթիթեղն անմիտ որ զլուսով ճրագին թռիչս առեալ՝ 'ի նոյն և զթևան խանձատիցէ. և ստուեր նաւուն ստէպ ստէպ այլափոխեալ յերեսաց ծածանմանց լուծական ալեացն՝ նորասքանչ իմն ընծայէր մեզ տեսարան, և զնաւն մեր սոսկավնթիխար շահապետ ծովուց երևեցուցանէր...։

Եւ ահա յանկարծակի կոհակք փոթորկեալք, շառագոյնք, լուսափայլք և փրփրաձևք գիշան բարդեցան զառաջեաւ նաւին մերոյ որ ճախր առեալ խաղայր ընդ ալիս։ Յեռանդն ուժգին հարան առ ժամայն պտոյտք ջուրցն հոսանաց, ծաւալեալք շուրջանակի անդր քան զդրկաչափս հարիւր. և թէ տեսանէր ոք զյոյզս կոհակացն պտոյտքելոց, իբրև 'ի սաստիկ ջերմանէ արդեօք տագնապեալ զծովն վարկանէր։ Անդէն և անդ ամբարձաւ դիզաւ ջուրն բլրաձև, և յառաջէր քան զմեզ, և 'ի գնալ իւրում երթալով երթայր և աճէր և ուռնոյր ահագին գոչմամբ. և ես զվասն էրն անգիտանայի, բայց և զարհուրէի ոչ 'ի տեսլենէն։ Գամ քան զգամ 'ի հոսանուտ լեռնէ անտի հատաւ վերացաւ բարձրացաւ սիւն անհեթեթ մեծութեամբ, և մրրկեալ չշնչմամբ երկայնեցաւ ձգեցաւ և յամպս երկնից կցեցաւ։ Անդ էր տեսանել տեսիլ վսեմ և սքանչելի, զսիւնն բիւրեղեայ ընդ երկինս և ընդ երկիր կանգնեալ. և ճառագայթք արևու երփն երփն զկատար նորին գեղազարդէին իբր զծիածան բազմագունի, և ստուեր ահագին զատրոտուն անկեալ՝ պղնձի խարսխաց զոիպ յաչս նկարէր որ 'ի ձեռն վերայ հաստատեալ կայցէ։

Թաթառն, թաթառն, աղաղակեաց առ հասարակ նաւապետն և նաւատի։

Ընդ այս բարբառ գողումն անակնկալ առ վայր մի անկաւ զինև. այն առաջին նուագ էր զի տեսի ևս զթաթառն, և անդէն 'ի միտ առի եթէ քանի՛ ստասպատիր բանք էին զորս երբեմն ընթերցեալ էր իմ զայնմանէ։ Կարծէի ես 'ի տեսիլ տագնապելոյ ծովուն մեծի, եթէ ահա անդէն 'ի յորձանան ահագինս դիմեմք կուր լինել. այլ զուարթերես զմերձակայսն տեսեալ՝ վերստին ոգի առի։ Լուռ ևեթ կայր նաւաստին, ոչ յերկիւղայլ 'ի զարմանս ըմբռնեալ, և 'ի մին միայն ուշ եդեալ հայէին՝ զի մի 'ի թաթառն ընդհարցին։

Գահ մի 'ի զնին տեսարանին կացեալ, ապա գոչեաց նաւապետն. « Հապա 'ի հուր. — դարձ՛ զեկավարդ. — միտ դիք յառաջ. — հար »...

Թնդաց ձայն ոմբին յերեսս անդնդոց, և սիւնն խորտակեցաւ առ խարսխաւն, զգողանի հարաւ, սասանեցաւ առ վայր մի, և փլուզեալ հոսեցաւ յանկարծակի իբրև զահագին ինչ զհիւսս ձիւնական։

Յետ սուղ ինչ պահու և հետք անգամ մեծի տեսարանին չերևէին 'ի ծովու, և դարձեալ վարեցաք մեք զընթացս մեր 'ի մուտս կոյս արևուն։ Ամն աբրեգական կիսով չափ ծովասուզեալ՝ զյետին ճառագայթս իւր արձակէր 'ի մեզ. լայնածաւալ ծովուն ալիք տակաւ ստուերացան, և նաւն ճոխաճեմ սուրայր ընդ նոսա իբրև զնետ ոստուցեալ 'ի լայնալիճ աղեղանէ, և իբրու ընդ գիշերավար աստեղն երագութեան եկեալ 'ի վեր։ Յայնմ վայրի լոյս արեգական չինչաւ յանկարծակի, (քանզի չէաք յաշխարհի անդ վերջալոյս երեկորին,) և ալիք ծովուն և հետք նաւուն, և ծուխն և նաւն և եզերքք երկնից միանգամայն ծածկեցան յաղջամուղջս գիշերոյ։

---

1 P. Hennequin.